ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- ----- 2026 թվականի №-Ա

## ՏԻԳՐԱՆ ԱԼԲԵՐՏԻ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻ ԵՎ ՀԵՐՄԻՆԵ ԱՐԹՈՒՐԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՆՑ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՌԱԴԻՈՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԻՐՈՒՅԹԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով՝

ա) Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության 2025 թվականի դեկտեմբերի 4-ի №04/11.1/10146-2025 գրությամբ ներկայացված տեղեկատվությունն առ այն, որ էլեկտրամագնիսական իրավիճակների հետազոտումների արդյունքում Կոտայքի մարզի Առինջ բնակավայրի 15-րդ փողոցի №60 առանձնատան (Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն՝ նշված հասցեի անշարժ գույքի նկատմամբ գրանցված է Տիգրան Ալբերտի Մնացականյանի և Հերմինե Արթուրի Կարապետյանի ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը) տանիքին հայտնաբերվել են առանց թույլտվության 890-902,5ՄՀց ռադիոհաճախականությունների տիրույթում շահագործվող «Ֆիլիպս» տիպի անտեններ,

բ) առանց թույլտվության ռադիոհաճախականությունների տիրույթի օգտագործումը դադարեցնելու վերաբերյալ Տիգրան Ալբերտի Մնացականյանին և Հերմինե Արթուրի Կարապետյանին ուղղված Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2025 թվականի դեկտեմբերի 5-ի №ՍԾ/34.2-Մ2-9/6661-2025 գրությունը, որի վերաբերյալ որևէ փաստարկ չի ներկայացվել,

գ) որ իրավասու պետական մարմնի ներկայացրած տեղեկատվությամբ փաստվել է Տիգրան Ալբերտի Մնացականյանի և Հերմինե Արթուրի Կարապետյանի կողմից առանց թույլտվության 890-902,5ՄՀց ռադիոհաճախականությունների տիրույթի օգտագործումը, և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «ժդ» ենթակետը, 3-րդ կետի «ե» ենթակետը, 60-րդ հոդվածը և «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է**.

1. Տիգրան Ալբերտի Մնացականյանին և Հերմինե Արթուրի Կարապետյանին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից դադարեցնել առանց թույլտվության 890-902,5ՄՀց ռադիոհաճախականությունների տիրույթի օգտագործումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երեսնօրյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ երկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Տիգրան Ալբերտի Մնացականյանին և Հերմինե Արթուրի Կարապետյանին օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝** **Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ**

ք. Երևան
-- --------2026թ.